յերեսսնոցա զի փայլէին դեղնեալք որպէս քըրքում։ Որք և դային առ հասարակ՝ և ողջունէին զսուրբն Մեսրոբ զընկերակիցն իւրեանց, և առնուին զկենդանի պատգամն՝ և եռային հոգւով։ Եւ ձայն բարձեալ՝ շնորհընկալ լինէին շնորհացն. և երկու գլուխքն հանդերձ անդամաւքն՝ աւրհնէին՝ գովէին և փառաբանէին ըզմիասնական երրորդութիւնն Աստուած, որ այսպիսի պարգև շնորհեաց ինքեանց և անձանց իւրեանց՝ [թղ. 16 բ] յինքեանց ժամանակի։ Եւ յարոյց որդի և զաւակ նորոյս Իսրայելի՝ որ լուսաւորեաց զսիւնս հաստատութեան և ճշմարտութեան՝ զժողովուրդս Աստուծոյ կենդանւոյ ի փառս մեզ և ի պարծանս Քրիստոսի։ Եւ կատարեալ զուխտն դառնային իւրաքանչիւր ի գործ իւր. ոմն ի դասել և ի պատժել և զիրաւունս սիրել, ընդ առաւաւտն սպասնանել և սատակել զթիւրեալսն յուղղն ճշմարտէ. և միւսն հոգևոր գաւազանաւն յանդիմանեալ սասանալ մխիթարեալ և իջուցանել զիւղն ի մորուսն և ի գրպանն։

Իսկ երանելին առեալ հրաման և ընթանայր ընդ բոլոր աշխարհն՝ ընտրելով համբակս ողջախոհս և ուշիմս, քաղցրաբարբառս և երկայնավանկս։ [1] Մանաւանդ ասացից ճշմա-

1. Խոր. Գր. Գ. գլ. ԾԴ. «ժողովեալ մանկունս ըն-